

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԺԱՄԸ 12:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ա. Օսիպյան	Հայաստանի բանկերի միության նախագահ
Ռ. Թովչյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Ա. Խաչատուրյան	Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի (ՀԱՄՀ) գործադիր տնօրեն
Գ. Մարգարով	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ
Ժ. Կարասալանյան	«Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն
Ն. Բալայան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի իրավաբան
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ս. Սիմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ

1. Հիմնադրամի նոր կառուցվածքի և հաստիքացուցակի քննարկում և հաստատում
- 1.1 խորհրդատուների խորհուրդ
- 1.2 հավատարմագրման խորհուրդ

(Ռ. Թովչյան, Տ. Մարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թովչյանին՝

ա. հավատարմագրման խորհրդատուների խորհրդի ֆինանսավորումն իրականացնել ԹՎԻՆԻՆԳ կամ Թաեքս ծրագրերի միջոցով,

բ. հավատարմագրային խորհրդի փոխարեն ձևավորել հավատարմագրային հանձնաժողով՝ փորձագիտական խմբերով,

գ. սահմանել հավատարմագրման հանձնաժողովի 5 անդամից բաղկացած կազմ, 4 տարով ժամկետով, ռոտացիոն սկզբունքով (յուրաքանչյուր տարի՝ 1 անդամի ռոտացիա),

դ. հավատարմագրման հանձնաժողովի ղեկավարը կհանդիսանա ՈԱԱԿ-ի տնօրենը.

2) հաստատել՝

ա. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի նոր կառուցվածքի և հաստիքացուցակի վերջնական խմբագրված տարբերակը,

բ. հավատարմագրման խորհրդի ձևավորման և գործունեության ընթացակարգի վերջնական խմբագրված տարբերակը:

2. Հավատարմագրման խորհրդի ձևավորման և գործունեության ընթացակարգի քննարկում և հաստատում

2.1 Հավատարմագրման խորհրդի անդամների թեկնածուների քննարկում

(Ռ. Թովչյան, Տ. Մարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թովչյանը՝ օրակարգի 1-ին հարցի հետ միասին:

3. Փորձագիտական խմբի ձևավորման կարգի քննարկում և հաստատում

(Ռ. Թովչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թովչյանին՝ ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանի առաջարկությանը համապատասխան՝ Փորձագիտական խմբի ձևավորման կարգի 21-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Համակարգողի աջակցությամբ փորձագիտական խումբը պատրաստում է ՈԱԱԿ-ի հավատարմագրման խորհրդի եզրակացության նախագիծը և այն և ներկայացնում խորհրդի նիստին».

2) հաստատել Փորձագիտական խմբի ձևավորման կարգի վերջնական խմբագրված տարբերակը:

4. Փորձաքննության անցկացման ձեռնարկի քննարկում և հաստատում

(Ռ. Թովչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թովչյանին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Կ. Հարությունյանի հետ համատեղ քննարկել և ըստ անհրաժեշտության խմբագրել այն.

2) հաստատել Փորձաքննության անցկացման ձեռնարկի վերջնական խմբագրված տարբերակը:

5. Հիմնադրամի ֆինանսական քաղաքականության քննարկում և հաստատում

5.1 Հավատարմագրման գործընթացի բյուջեի ձևավորում

(Ռ. Թովչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թովչյանին՝ մեկշաբաթյա ժամկետում ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանի հետ քննարկել միջազգային

փորձագետների զծով նախատեսված գումարների հաշվարկման մեթոդաբանությունը և ըստ անհրաժեշտության խմբագրել այն:

6. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի 2011 թվականի բյուջեի հոդվածների փոփոխության քննարկում և հաստատում

(Ռ. Թովյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի 2011 թվականի բյուջեի հոդվածների փոփոխությունը:

7. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի 2012 թվականի բյուջեի քննարկում և հաստատում

(Ռ. Թովյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի 2012 թվականի բյուջեն:

8. Ընթացիկ հարցեր

(Ռ. Թովյան, Տ. Սարգսյան)

Ընդունել ի գիտություն «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թովյանի հաղորդումն առ այն, որ միջազգային փորձագետների կողմից ներկայացվել է եզրակացություն, ըստ որի ՈԱԱԿ-ի գործունեությունը համապատասխանում է եվրոպական չափանիշներին և գնահատվում է բավարար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ